№ 1 ԹԻՖՐԱՆ ՇԱԲԱԹ ՅՈՒՆՎԱՐ 21

1895
ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՖՐԱՆ ՇԱԲԱԹ ՅՈՒՆՎԱՐ 21

«ՁԱՒԻՂԻ» տարեկան գինը 10 դրան, կէս տարուանը 6 դրան։ Առանձին համարները 5 շահի։

Արտասահման տարեկան 8 ֆր. կամ 3 ռուբլի կէս տարուանը 5 ֆր. կամ 2 ռուբլի։

Արտասահմանից փողի համար պիտի դիմել հետևեալ հասցէով. Черезъ Баку въ Энзели Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ пер. Бекъ-Назарову.

ՁԱՒԻՂ

«ՁԱՒԻՂԸ» ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՁԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է 10-ից մինչև 2 ժամը. (բացի կիրակի և ազգ օրերից)

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով՝ իւրաքանչիւր բառին մի անգամուայ համար 1 շահի։ Արտասահմանի յայտարարութիւնները բառին 1 հրապէկ։

Նամակների, նաև Պարսկաստանի բաժանորդագրութեան՝ հասցէ. Rédaction «CHAVIGH» Téhéran. (Perse)

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հաշուեկշիռ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ուրմիոյ հայերը. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլի Տեսութիւն. Արտաքին լուրեր.—Տայտարարութիւններ.—Ֆելիեսօն։

ՀԱՇՈՒԵԿՇԻՌ

—

Ի՞նչ հաշիւ տալ։

Տարին անցաւ, սկսում է նորը, բայց երկար տարիներից ի վեր է, որ հայը վշտով է միայն ողջունում նորին և անէծքով ճանապարհ դնում հինը։ Ոչ մի մխիթարական երևոյթ չը փայլեց նրա կեանքի մէջ. նրա ոչ մի յոյսը չիրականացաւ, ոչ մի ջանքը արդիւնաւոր չեղաւ, անբախտ մարդի պէս ինչ բանի որ ձեռք խփեց՝ վնասուեց։

Եւ հայի նոր տարին մի անգամ ևս ողջունում է վշտերից յոգնած անձերի։ Ոչ մի ուրախացուցիչ թւանշան չէ կարող երևալ նրա հաշուեկշռի մէջ։

Ի՞նչ հաշիւ տալ ուրեմն։

Թւել մի առ մի ցաւեր ու կեղտեր, թէ շովինիստ դառնալ և բոլորի վերայ մի ոսկեզօծ դիմակ քաշել ու անձնախաբուութիւնով մխիթարուել։

Թւել օրինակ. այն պարբերական սոսկումները, որոնց ենթարկվում են մեր հեռաւոր եղբայրները, հազարներով զոհ դնալով ցրտի, սովի և սրի...

Թւել այն բոլոր չարիքները որոնք պարբերապէս արտադրում են հայ հասարակութիւնների համար նրա՝ միազմների պէս վխտացող և մաքուր միջավայրը ճահճացնող պարազիտները, որոնք ծծում են մեր կեանքի յետին կաթիլը, ուռճանում են մեր քրտինքով։

Թւել մի առ մի մեր ամեն տեղի հասարակական հիմնարկութեանց ողբալի դրութիւնը. թէ որպէս նրանք ընկել են ապիկարների, պորտաբոյծների և ոսկի բարձած էշերի ձեռքը, դարձել են որպէս աղբիւր շահագործութեան՝ վաշխառուների, որպէս գործիք կուի՝ եսամոլների....

Ոգկեզօծ յոյսերով, ոգևորութեամբ ողջունեցինք անձերի և դրանք մեզ խաբեցին մեր յոյսերի մէջ։

Աչքակապների շլացուցիչ ձևերից հիացանք, նրանց տուինք մեր ականջները ու մտքերը և նրանք վշտերով լցրին մեր կեանքը, ջլատեցին մեր առանց էն էլ, սակաւ ոյժն ու յամրութեան շղթաներով կաշկանդեցին մեր քայլերը։

Մի՞շտ այդպէս խաբուել ենք. մեզ համար ցեխից կուռքեր ենք շինել և նրանց առջև երկրպագել... և կուռքը ցեխոտել է մեզ։

Փքուն ճառերով ոգևորուելով, ֆրանսիական «ծանրակշիռ» մարդիկ էին, ուստի նաւը դեռ տեղից չը շարժուած հանգստացաւ ծանծաղների վրայ. քաջ նաւավարները հասկանալով, որ բաւական ոյժ է հարկաւոր նաւը ծանծաղներից ազատելու և յաջող թիավարելու համար, խոհեմութիւն համարեցին մի քանի ամիս շարունակ քնել իրանց ոյժերը կազդուրելու. վերջապէս դար թնեցին։ Բայց զարթեցին տարաժամ, ուստի վճռեցին ճակատագրին յանձնել այդ նաւի բաղդը, իսկ իրենք ձեռքները լանալով, չը թրջուած ցամաք դուրս ելան։

Այժմ այդ շարաբաղդ նաւը ամենքի կողմից ճակատագրին է մատնուած. կան մի երկու հոգի որոնք մտածում են ազատել նորան ծանծաղներից, բայց ոչ թոկ են գտնում դորա համար և ոչ մշակ։

* * *

Մինչդեռ եկեղեցիներում ծննդեան աւետիս էին երգում և աւետում էին աշխարհին Փրկչի ծնունդը, թէհրանցիք էլ «աւետիս» էին կարդում և աւետում իրար, որ Թէհրանում պիտի ծագի մի, «Ասող Արևելեան», գալով պիտի կանգ առնի Դարվազա Դովլաթ թաղի վրայ, որովհետև ըստ աւանդութեան, այդտեղից պիտի ծագէ մի իշխան, որ պիտի հովի և միացնի Թէհրանի պառակտեալ ժողովուրդը։ Լսում ենք, որ արդէն հրաւիրուած է մի աստղաբաշխ, որ պիտի ճիշտ որոշէ այդ «Արևելեան Աստղի» երևալու ժամանակը։ Աստղի երևելուն պէս, կը ծնուի և ակնկալեալ իշխանը, որին երկրպագութեան կը գան ամեն կողմից հայ իշխաններ. կերկրպագեն և կը մատուցանեն նորան ձիւթ, սապոն, աղուէսի մորթի, թոզ և մի ուռկան։

«Արևելեան Աստղի» երևալու օրը կը լինի «ցնծութիւն յոյժ և ուրախութիւն մեծ». և ի պատիւ նորա, մի ամբողջ տարուայ ընթացքում-Թէհրանում ծնուած բոլոր հայ տղաները Արևելք կը կոչուեն, իսկ աղջիկներն՝ Աստղիկ։

«Ճաւիղը» եղաւ պատճառ շատերի կանգմանը և գլորման։ Այդ «Աստղի» երևելով, գլոքուածները կրկին պիտի կանգնեն, մեռեալները կրկին կենդանութիւն ստանան։

Շատ «վսեմափայլներ», «Ճաւիղի» պատճառով, «նսեմափայլ» դարձան. «Արևելեան Աստղը» առատապէս պէտք է բաշխէ իր փայլից՝ փայլազուրկներին։

Շատ քողեր պատուեցան և նոցա տակից դուրս եկան այլանդակ հրէշներ, «Արևելեան Աստղը» պիտի նոցա կրկին քողապատ անէ...

* * *

Յունվարի 13-ին Դարվազա Դովլաթի Հայկական դպրոցի սենեակում, մէկ տարեկան երեխայի 25-ամեայ գործունէութեան յօբելեանը կատարուեցաւ. բոլոր հանդիսատեսները հիացած մնացին այդ հրաշալի երևոյթով, բայց ոչ ոք չը հետաքրքրուեց թէ ինչ հիման վերայ տեղի ունեցաւ այդ երևոյթը։—Պատասխան. որովհետև այդ մանուկը անանակից էր մի մարդու հետ, որը 25 տարի գործունէութիւն ցոյց տալուց յետոյ մեռել էր և որի շորերից մի քանիսը պատահմամբ հագել է նա։

Հանդիսին շքեղութիւն էր տալիս Երաժշտասիրաց խումբը իր նուագածութեամբ։

Հայ հարուստներից մէկը, ազգասիրութիւնից դրդուած, նուագածութեան ներդաշնակութիւն ընծայելու համար, երաժիշտներից ամեն մէկին մի մի ձեռք միատեսակ հագուստ ընծայեց։

Ն. Ղ...

ՖԵԼԻԵՏՕՆ

Ընդունելութիւն Նոր Տարուայ այցելութիւնների։ Իմ արած սխալը։ Ինչպէս պէտք է խօսել կամ գրել ըստ Թէհրանցոց «փոլիթիքի»։ Ես էլ այդ ձևով եմ գրում Ֆելիէտոնս։ Ազգային նաւը և նորա ղեկավարները։ Աւետիս Թէհրանցիներին։ 25-ամեայ գործունէութեան յօբելեան մի տարեկան երեխայի և նորա մեկնութիւնը։

—

Նոր Տարուայ առաջին շաբաթը ամբողջապէս զբաղուած էի այցելութիւններ ընդունելով. բազմաթիւ անձինք, որոնց Նոր Տարին շնորհաւորել էի պատուական ընծաներով, դալիս էին անձամբ յայտնելու այդ մասին իրանց շնորհակալիքը։

Բոլորն էլ գտնում էին, որ շատ յարմար և տեղին էին իրանց ընծաները, որի համար և նրանք անչափ երախտապարտ են. բայց մի և նոյն ժամանակ հրաւիրում էին իմ ուշադրութիւնը հետևեալ նկատողութեան վերայ. «Դուք թէպէտ երկար տարիներ ապրել էք Թէհրանում, բայց դեռ լաւ ծանօթ չէք մեր բարքերին և սովորութիւններին. դուք շատ սխալուել էք ուղարկելով ձեր ընծաները մերկ, առանց ծածկոյթի։ Այստեղի սովորութիւնն է ընծայ ուղարկելիս դնել նորան պատուական «խոնչայի» մէջ և ծածկել արտաքին կողմից թանկագին ծածկոյթով։ Թող օտարները հիանան ընծայի արտաքին ծածկոյթով. հոգ չէ եթէ ընծան նոյն իսկ թոյն լինի, միայն թէ ծածկուած լինի օտարների աչքից։ Տուէք Թէհրանցուն, եթէ նա հիւանդ է, դառն հաբեր, նա կընդունի ուրախութեամբ, միայն թէ այդ հաբերը ծածկուած լինեն արտաքին կողմից ոսկեզօծ կեղևով. թող յայտնի երևայ ամենքին նրանց փայլուն կեղևը, իսկ միջուկը ծածկուած լինի նրանց աչքերից։ Ցայտնեցէք նրան դառն ճշմարտութիւններ. մենք կընդունենք, միայն թէ արէք այդ մեծ զգուշութեամբ և քողարկելով։ Մենք պարսկաստանցիքս, սովոր չենք լսել մերկ ճշմարտութիւններ. թող նկատեն մեր պակասութիւնները, միայն այն ձևով, ինչ ձևով մեզ հաճելի է և ինչպէս պահանջում է տեղական «փոլիթիքը»։

Այդ և այդպիսի նկատողութիւններ լսում էի ամեն կողմից. մէկը նոյն իսկ աւելի պարզ կացուցանելու համար այդ նկատողութիւնները, բերաւ հետևեալ իրական օրինակը։ Դիցուք սեղանի էք նստած պատուաւոր հիւրերի հետ և նկատում էք, որ վերջիններից մէկի միրուքին, փլաւ ուտելիս, իւղ և բրինձի հատիկներ են թափուել. լաւ չէ եթէ այդ մասին ուղղակի նկատում էք, որովհետև կարող է նորա քէֆին դիպչել. այլ պիտի հասկացնէք նորան այսպիսի ձևով։ «Ձեր գեղեցիկ ծառաստանը ջրուել է ականակիտ աղբիւրով և յայտնուել են այնտեղ սպիտակ ծաղիկներ։»

Քանի որ Թէհրանցոց «փոլիթիքը», ինչպէս իրենք են ասում, այդ է վերցնում, ես էլ նրանց «իսթիքը» չը կոտրելու համար կաշխատեմ այս անգամ ֆելիետոնս այդ ոճով գրելու։

* * *

Մի քանի ամիս առաջ, ազգային նաւը յանձնեցին մի խումբ «ազգային» անձանց, բայց որովհետև նորա բոլորն էլ քիչ բացառութեամբ զեօրների ձեռքն ենք դրել մեր իրերը և նրանցից միմիայն անմտութիւններ ու վնասներ ենք ստացել։

Ընտրել ենք ծերեր, բթամիտներ և պահանջել, որ նրանք երիտասարդի, սրամտի պէս շարժուին ու գործեն։

Լուրջ գործերը յանձնել ենք պատանիների և զարմացել՝ թէ ինչո՞ւ նրանք ընդունակ մի ուրիշ գործում—այդպիսի գործերում միմիայն ժամանակի կորուստ են պատճառել և ուրիշ ոչինչ։

Նուիրական զգացմունքների անունով կորզել, գՕլել են մեր տնտեսական ոյժից, շլացուցիչ դեկլամացիաներով մեր արիւնն են եռ բերել, ապա գնացել նստել են հեռու և շարունակում են դեռ խաբել մեզ....

Տարիներից ի վեր, չը խրատուած դարևոր անցեալի տխուր, բայց ակներև օրինակներից, չը խրատուած ոչ-շատ հեռու ազգերից, մեր բոլոր յոյսը դրել ենք մի դասակարգի վերայ, որից ոչ միայն մենք, այլ և ամբողջ մարդկութիւնը միշտ վնասուել է. որոնց միակ պաշտօնն է կռել կոփել միջոցներ՝ մեր քրտինքը շահագործելու համար։ Ընկերական այդ բոլոր պարազիտային դասակարգը կեղտոտում է մեր մթնոլորդը օրէց՝օր, որովհետև մաքրութիւնը բնականաբար նրան մահացնում է. զինվում է նա գիտութեան, քննական ոգու, շարժման... դէմ, որովհետև անգիտութեամբ ապշութեամբ և դանդաղութեամբ, դրոշմուած ազգերի մէջ միայն կարող են նրանք աճել, բազմանալ։

Եւ բազմանում են նրանք մեր մէջ, բազմանում ահագին քանակութեամբ. հայի հաշուեկշիռը մի սոսկալի թւանշան է ցոյց տալիս երկրաչափօրէն աճող պարազիտների, իսկ մեր պատմութիւնը արիւնոտ տողերով է ամեն անգամ նշանակել այնպիսի շրջաններ, որոնցում այդ տարրն է իշխել հասարակական բոլոր գործերում։

Եւ իսկապէս, անտաշ, անպէտք քահանաներ վխտում են մեր շրջաններում. առաջնորդական պաշտօնները յանձնուած են Ս. սեղանի վերայից՝ փողոցային հայհոյանքներ թափող և հասարակական գործերը վնասող առաջնորդների. կրթական հաստատութիւնները, նորանց շնորհիւ, արիւններ դարձրած՝ յցուել են փոշիապատ սեղմուած ուղեղներով հնասահմանաւոր աշխարհայեցողութեան տէր՝ ղեկավարներով և ուսուցիչներով. այսպիսով մի ընդհանուր բանակ է զինուած ընդդէմ գիտութեան, լոյսի և առաջդիմութեան և այդ բանակը զինել է նա, որ զանազան բեմերի վերայից, փքուն բառերով ու ազիոդրմ «ոհ» ե-

բով լոյս ու գիտութիւն բառերն էր արտասանում...

Մենք սոսկալի կերպով խաբուեցինք... 1893—94-ի Հաշուեկշիռը մի թիւ տուաւ մեզ, որի առջև նսեմանում են բոլոր միւս վատ թուերը...

Ե՞լ ինչ հաշիւ տալ. շարունակենք: Ընդհանուր հայութեան վերաբերեալ այդ խնդիրներից յետոյ հաճկ է իջնել նրա մասնաւոր հասարակութիւնների մէջ և մի առ մի թուել այն բոլոր կեղտերը, որոնց մէջ լողում ենք մենք, կարծելով թէ մաքրութեան մէջ է, որ շնչում ենք:

Հաճկ է օրինակ. հաշուել դպրոցները աւերող հոգաբարձուներ, եկեղեցիների փողերը կլանող երեսփոխներ, հրապարակախօսական ասպարէզը պղծող հրապարակախօսներ, անկեղծութեամբ կեղծող շանտաժիստներ, ուրիշի փեշերի տակ մտած՝ հասարակութեան հարստահարող վաճառական—խմբագիրներ, ճշմարտութեան քողը երեսին առած ստախօսներ, ուրիշի աչքի շիւղը նշմարող և իրենի գերանը չը տեսնող բարոյախօսներ:

Ոչ, ի զուր կրկնողութիւն կը լինէր այդ, որովհետև դրանք շատ վաղուցայ սխտեր են, որոնք գտնուում են մեր հասարակական օրգանիզմը. դրանք վաղուց ի վեր կազմում են հայի փառքը, նրա ընկերական կեանքի պայմանը...

Հայ ժողովուրդը քանի գնում է, կեղտերը ըստ էս մաքրութիւն է ընդունում և vice versa:

Լրբաբար ասուած սուտը քարոզվում է իբր ճշմարտութիւն՝ նրա աշտարակների վրայից, փողի և ոստիկանական ոյժերով առաջմղուած մասնաւոր կրքերի արդիւնքները՝ ընդհանրացվում են որպէս կուսակցական ազնիւ պայքարներ, իսկ նրա ժամանակը խլում են յիմարներ և ֆրազեօրներ:

Սրբութեան անունով պղծութիւններ են գործվում, արդարութիւնն ու ճշմարտութիւնը ոչ մի ազգի մէջ այդքան չեն տանջվում ու հարստահարվում, ոչ մի հասարակութեան մէջ այդ սրբութիւնների անունով այնքան չարիքներ չեն գործվում, որքան մեզնում, մեր հասարակութիւնների մէջ...

.....

Իսկ պարսկահայերի հաշուեկշիռը:

Ի՞նչ հաշիւ տալ. ասել որ ամեն ինչ տակն ու վրայ է եղել այդ հասարակութիւնների մէջ այն աստիճան, որ սուտը ճշտից զատելիս՝ մարդ անյաջողութիւնից յուսահատվում է: Ասել որ գծուծ հաշիւներն են եղել ազգային գործեր, իսկ սրանք նկատել են որպէս աւելորդութիւններ. կրկնել որ մեռեալների հոտած դիակներն են պաշտել, գողերի համար յօբելեաններ են սարքել, անբարոյականների՝ սերնդի կրթութեան գործ յանձնել, մուրացիկների՝ հովութիւն բաշխել....

«Շաւիղը» յոգնեց կեղտերի վերայ փռուած սպիտակ, մաքրութեան քողերը պատռելուց. նա բաւական թուեր ու անձեր մատնանիշ արեց և դեռ ով գիտէ, ապագայ տարեայ հաշուեկշռին, պարսկահայը որպիսի՞ սև թուեր պիտի ընծայէ...

Ոչ մի սրբութիւն չէ մնացել: Ուսումնարանները խաղալիք և ասպարէզ են եղել կրօնաւորների անմիտ փառասիրութեան, ուսուցիչների մշտակայ կռիւների. ընտրվում են թքով կպցրած հոգաբարձուներ այնպիսիներից, որոնք դպրոցը ախոռ են կամենում դարձնել:

Եկեղեցիների եկամուտները յանձնել են այնպիսիների ձեռք, որոնք տարիներով հաշիւ տուած չ'ունին և որոնք ով գիտէ ինչ բանի են գործադրում այդ հարուստ գումարները, խլելով ուսումնարանից:

Եւ ապա, երբ այդ բոլորը իրենց երեսին ես խփում, զարմանում են որ ուրիշ տեսակ կարող էր լինել. չեն կարողանում ըմբռնել թէ ինչպէս կարելի է դպրոցը իբր ախոռ չը նկատել և կամ եկեղեցիների փողերը պռոնիկների վերայ չը շռայլել...

Այժմ, էլ որ սև թիւը մէջ բերել. բոլորը տխուր են, խիստ յուսահատեցուցիչ: Եկամուտի մասը պարապ է, դատարկ, և սնանկութիւնը կատարեալ:

Հայի թէ ընդհանրական կեանքի և թէ նրա մասնաւոր հասարակութիւնների գործերը, նրա անդամների բարոյական կեանքը, այնքան այլասերուած են և ապականուած, նիւթական դրութիւնն էլ այնքան անմխիթար է, որ յուսահատ եզրակացութիւնների է հասնում մարդ, երբ զննում է նրանց:

Անիծել ենք հին տարիներից շատ շատերի. անցեալ տարին մանաւանդ, մեզ համար վշտերից բացի ոչինչ չը ծնաւ. ինչ պիտի բերէ արդեօք այս տարին:

Հարկաւոր է վերջապէս ցած դնել վարդագոյն ապակին մեր աչքերից, գործերի դրութիւնը իրենց իսկութեամբ նկատել: Դեռ ժամանակ կայ գուցէ, բայց շատ քիչ ժամանակ, ազգերի կեանքի համեմատութեամբ միայն մի ժամ մի րոպէ...

Վ. Փ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՈՒՐՄԻՈՅ ՀԱՅԵՐԸ

—

Երբ լսեցինք, որ մի լրագիր էլ, «Շաւիղ» խորագրով, Պարսկաստանի խոր անկիւններից մէկում—Թէհրանում լոյս պիտի տեսնի և որը նպատակ ունի ուսումնասիրել նաև տեղւոյս գիւղական կեանքը, հրաւիրելով կարդողութեան տէր և լուսաւորուած անհատների ուշադրութիւնը այդ չքաւոր գիւղացոյց աննախանձելի կացութիւնը բարւոքելու, անշուշտ ուրախացանք:

Այդ լուրը իրագործուեցաւ. «Շաւիղը» ահա մի տարի է, որ լոյս է տեսնում: Բաւական երկար սպասեցինք այդ թերթում հանդիպելու Ուրմիոյ մասին մի լուրջ տեղեկութիւն, սակայն, տարաբաղտաբար, մինչև այսօր ոչինչ չենք լսել, կարդացել և իմացել:

Երբ սպասելով տեսնում եմ, որ գրող չը կայ և այդ մասին էլ Դանիէլի ուսեալները երբէք չեն ուզում մտածել, ս. առաջնորդը անտեղեակ է նրանց դիրութեան նկատմամբ, չը կայ հասկացող և գլուխ ցաւացնող, ուստի ինձ պարտական եմ զգում գրել, յուսալով որ մի բան կը դառնայ:

Ուրմիոյ գաւառը Արարատեանի ամենահրապուրիչ և կախարդիչ երեսոյթ ունեցող գաւառներից մինն է: Բնութիւնը ամեն ինչ առատօրէն բաշխել է գաւառացիներին. առատ է ջուրը, առատ է հայը, առատ է պտուղը, արգաւանդ է հողը, հոգեպարար է օդը, պըճնարոյս են լեռները, կենսատու են անուշահամ ագրիւրները. ինչ երկարացնեմ, սոյնպիսի հազար ու մի զուարճալի տեսարանները՝ նորան դրախտ են դարձրել: Այդ բնական առատութիւնից տեղացի հայերն էլ մասամբ բաժին ունին: Բայց աւաղ, մի խորին խաւար թագաւորում է այդ գովելի ու դրախտանման գաւառում:

Հայերը կատարեալ անգրագէտ են. երկար, շատ երկար ժամանակ է, որ տգիտութեան թանձր ու մառախլապատ մթնոլորտով շրջապատուած՝ մինչ ցարդ չեն կարողացել, նորա տենդատիպութեան պատճառով, նշմարել իրանց ոտից տակ արդեօք փուչ, արդեօք կրակ, խոր վիհ, խորտակիչ պինդ ժայռ, ծակոտող խոթան, յօշոտող գազան և իրանց շուրջը առած արդեօք տնաւեր ու միանգամայն ամեն ինչ պատիւ, յարգ, համարում, սուրբ զգացումներ և ինքնաճանաչութեան անմեղ ճիգեր ոտի տակ առնող անգութ տանուտէր անզգամ գիւղապետ և ի մի բան, ինչ լինելը, ինչ չը լինելը ոչ մի կերպով չը հասկացան և չեն էլ կարող, որքան որ այդ վիճակումն են տակաւին:

Բնութեան դաժան պայմանների տակ տառապող ուրմեցին անուշադիր է մնացել ընդհանուր հայ զարգացած դասակարգին մինչև հիմա, որովհետև նրանց կենաց անպայման դժուար պարագաները նրբազգնութեամբ ուռումնասիրող և լրագիրների միջոցով ընդհանրութեան ծանուցում տուող անհատներ, անձնանուէր և հասարակական բարւոյն նպաստող գործունեայ մշակներ չեն եղել նրանց մէջ և արտասահմանից եկող անհոգ այցելուներն էլ երբէք չեն մտածել դորա մասին: Բայց յուսով ենք, որ «Շաւիղը» մի հրաւիրակ կը լինի այդպիսի դաւառների աննպաստ դրութիւնը բարւոքելու համար:

Ուրմիոյ հայերի թիւը 5000ի է հասնում, բայց կէսը թրքախօս է, մայրենի լեզուի մի տառն անգամ նորա ականջները չեն լսել և լեզուն չի արտասանել. իսկ միւս մասը խօսում է աղաւաղեալ հայերէնով:

Ունին 10—14 քահանաներ, որոնք գրեթէ չեն կարող հասկանալ իրանց կարդացածը:

Օրէնքից, կրօնքից անտեղեակ են և բոլորովին անծանօթ ազգութեան վերաբերմամբ: Շատ տեղերում կան աւանդութիւններ և այդ աւանդութիւնները, գրեթէ, կարող եմ ասել, տգէտների հաստատուն մնալու մի կայուն սիւնն են. սակայն այստեղում աւանդութիւններն էլ մեռել, ոչնչացել են, որոնք կարող էին անցեալ լուսոյ գտնէ հետքն անգամ պահել:

Մի անգամ քահանաներին հանդիպելով ժողովրդի չափից դուրս տգիտութիւնը ինձ առիթ տուեց դնել խօսել այդ հովի հետ. հէնց դորա համար էլ խօսքը բացեցի.

«Տէր այս ինչ, տէր այն ինչ, ժողովուրդը ոչ գիտէ ինչ է կրօնը, ոչ գիտէ ինչ է ազգը և երբոր մէկ բան էի հարցնում մէկից, միւսն ինձ պատասխանում էր. «Բարեկամ, ի զուր տեղը գլուխդ մեզ հետ մի ցաւցուր, մենք թշուառներս ինչ գիտենք, ինչ ենք տեսել և ինչ լսել մեր պապերից և նոյն իսկ մեր քահանաներից, որ ինչ իմանանք և քո դժուար ու մեզ անծանօթ հարցերին կարողանանք պատասխանել: Մենք ինչացու ենք՝ գնա տէր-տէրի մօտ և նրանից հարցուր ինչ որ կուզես. որովհետև գրի սեն ու սպիտակն էլ նա է իմանում: Հէնց այդ պատճառի համար էլ, տէր հայր, եկել եմ ձեզ մօտ մի քիչ խօսելու, որպէս ժողովրդիս հովիւի և առաջնորդի. թոյլ կը տա՞ք ինձ արդեօք:

—Է՜հ խէր օրնած, ինչի ես էդ դդայ քեզի ցածացուցելի, ինչ խօսք ունիս ասա, ինչ գործ ունի որդիս, էլ ինչ թոյլատուութիւն ես ուզելի, մարդ ինք էլ, կը զուրցանք էլ, ծըղզանք էլ (ծիծաղել), խարար էլ կառնինք, ջուար էլ կը տանք, ինչ զեան ունի:

Երբ ես յայտնեցի նրան որ ժողովուրդը չը գիտէ իր ազգութիւնը,—Որդիս, մենք վեր (որի) անունով կանչուել ենք խայ, էդ ինչի, որ ժողովուրդը չինալի, ասաց նա: Մենք Բըրիստոսի անունով կանչուիս ենք խայ-քրիստոնեայ, խա՜ չէ զարմէն (դրանից) ջոկ բան չ' կայ, եա ջոկ գիրօ-միրօների անունով չենք կանչուելի խայ քրիստոնեայ:

Ի՞նչ հայրենիք ես խարար առնելի. մեր գիրը, մասարը, ինչ որ գիրվիրի Ժամագիրքի, Սաղմոցի, Զարաքանի ու Մաշտոցի մէջ էին էլի. խօ զանցէն (դրանցից) աւել գիրք, եա խօտ չը կայ, որ քնզիկ ասեմ:

Ի՞նչ ազգութէն ես խարար առնելի. մենք էլ ասորիների և տաճիկների պէս մէ միլլաթինք, խօ զանցէն (նրանցից) աւել չենք: Ամա տիրացու, դուն (ուղիղ) ասած, Հայաստան անունը աղէկ չեմ խասկնալի ինչ մտքով-ես ասելի. մենակ-էն զդայ գինամ, որ՝ ինչ-պէս) մեր գեղը Կարատապատ, Նախիջևան թէրիէ և մէ թհարով (կերպով) էլ Թումաթար, Բարարու, Դար-Բարու *) էգէնց գեղերը, որ ջոկ միլլաթ չունին ուրենց (իրենց) մէջը, Խայըտաճն ինք ասելի զանցը և դուն ասեսես Հայաստան,—թող ըլի Հայաստան:

Ա՞խր տիրացու, զանք ինչ են, որ ժողովուրդը չինալի (չի իմանում). զանք հէնց առաջուց գիտէ, տամ ձիզիկ աղէզ չի խասկացի: Եւ էդ ինչի, որ էն էլ տեսեսես կիրակի օրերին զանցը քարող տամ. որովհետև պատասխանատու եմ»:

Ահա գրեթէ բոլոր Ուրմիոյ քահանաները այսպէս են խօսում:

Այս խօսակցութիւնը գրելով իմ նպատակս է միայն աւելի ճշտութեամբ և պարզ կերպով ներկայացնել ընթերցողներին նրանց հովիւների իսկական վիճակը:

Ամօթ է մեզ, շատ ամօթ, տեսնել Ուրմիոյ հայերի տգիտութիւնը և նրանից յառաջացած անթիւ աղէտները ու չը զարմանել. դրել ասել միայն, բայց ականջի յետև ձգել: Մթթէ ուրմեցին այդքան անարժան է ուշադրութեան:

Ուրմեցի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թէհրան 19 յունվ. 1895

Հաճեցէք մի անկիւն շնորհել ձեր պատուական թերթում սոյն երկտողիս:

Ամենից առաջ, շնորհակալութիւն ենք յայտնում մեր առաջնորդ Եսայի եպիսկոպոսից, որ մեզ այնպիսի բարեվարք քահանաներ է ընծայում, ինչպէս որ Թէհրանի Տէր Մաշտոց քահանան է:

Այսօր մի ննջեցեալ կար Ս. Գէորգ եկեղեցում և պատարագ: Երբ մտանք եկեղեցին, տեսանք որ պատարագիչը միւս թաղի քահանան էր, իսկ Տէր Մաշտոցը հարբած, չը կարողանալով ոտքի վերայ կանգնել, դպրութիւն է ուզում անել, որն որ նոյնպէս չէր յաջողվում:

Ննջեցեալին եկեղեցուց երբ դուրս են բերում, պատարագիչը թողնում է գնում, ասելով որ ինքը գործ ունի. ժողովուրդը սպասում է դրսում, որ պաշտօնատէր քահանան (Տէր Մաշտոցը) դուրս գայ իւր պաշտօնը կատարի—ննջեցեալին տանեն. տեսնում են քահանան չի կարողանում դուրս գայ այնքան հարբած է: Վերջապէս դուրս է գալիս և մի կիսատ պաշտօն է կատարում: Ժողովուրդը տեսնելով այդ տխուր դէպքը, բաւական յուսահատութեամբ վերցնում է իւրեանց ննջեցեալին և ասում է «եկէք մենք տանենք ամ-

---

*) Այս 3 վերջինները թրքախօս հայերի գիւղեր են հաշվում, թէև նրանցում կան մի քանի ասորիների և քիւրդերի տներ:

փոփենք, քահանայ չենք ուզում». տանում են հանգստարան, 15 րոպէ սպասում են մինչ գերեզմանը քանդեն։ Տեսնում են յանկարծ քահանան ներս եկաւ, ոտքից մինչև գլուխը ցեխ։ Փողոցումը գետին էր կպել, պարսիկներն են օգնել, ջուրից և ցեխից բարձրացրել։ Ժողովուրդը, մի քանի հոգի սկսեցին քահանային յանդիմանել, որ այդ ինչ շնորհք է, ինչու ես մեզի խայտառակում այլազգի մէջ։ Քահանան սկսում է գլխարկը գետին խփել, հայհոյել փողոցի հայհոյանքով։

Յուղարկաւորները այնուհետև թաղում են իրենց ննջեցեալը, յետոյ գրում են մի թղթի վերայ բոլոր անցքը։ 20 հոգի ներկայ էին, ստորագրում են և թուղթը պահել են մինչև կիւրակի օրն որ եկեղեցումն բոլոր ժողովրդին ներկայացնեն։

Ես ուզեցիմ լռել, չ՚անպատւել՝ այդ քահանային, բայց էլ չը կարողացիմ համբերել, քանի որ մէկ, երկու, երեք անգամ չի. շարունակ այսպէս են տեսնում նրան։ Այս դէպքի վերայ Գեր. Եսայի արքեպիսկոպոսի ուշադրութիւնն ենք հրաւիրում, քանի ժողովրդի մէջ շատ գրգռոց չի եղեր, եթէ ոչ՝ կոպալով դուրս կ՚անեն։

Գիտեմ, հոգևորականները ինձնից պիտի նեղանան այս յօդուածի համար, բայց երանի այն այգու տիրոջն, որ չաղկալն այգուց կը խռովի։

Մարտիրոս Կ. Բարսեղեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Շաւիղի» առաջին համարը եթէ այսքան ուշացաւ, պատճառը այն էր, որ նոր տառերի էինք սպասում օրէց՚օր և չը կամեցանք մի համար նախկին տառերով և ձևով հանել։ Տառերը 3—4 օր առաջ ստացանք և ահա սկսում ենք կանոնաւոր հրատարակութեան։ Տարուայ ընթացքում մենք 50 համար կը տանք, իսկ առաջին համարի ուշանալու համար մեր ընթերցողների ներողամտութիւնն ենք խնդրում։

—

Ինչպէս գիտեն մեր ընթերցողները, այս տարուայ համար հրաւիրուած են Թէհրանում, Հայկազ. դպրոցի համար երկու ուսուցիչներ, մէկը գրականութեան մէջ յայտնի պ. Վ. Փափազեանը, աւարտած ԺԷՆԷՎի համալսարանի հասարակական գիտութիւնների ֆակուլտետը, իսկ միւս Ներսեսեան դպրոցից աւարտած պ. Աւ. Ալրէսեանը։ Այժմ, որպէս սովորութիւն է գծուած անձերի, հասարակութեան մէջ միշտ խռովութիւն յարուցանող անձեր սկսել են զբաղուելի լուրեր տարածել ուսուցիչների մասին, մեղադրել նրանց անաստուածութեան, անհաւատութեան մէջ։ Թէհրանցիք թող փառք տան որ այս տարի այդ պարոնները եկել են իրենց մէջ. թող գիտենան որ նրանց ներկայութիւնը իրենց մէջ, պատիւ է իրենց համար, որովհետև նրանցից որ մէկը որ ուզենար, Կովկասում կարող էր աւելի շատ ռոճիկով գործ ունենալ քան թէ գար և իրենց 180 թումանին (մօտ 200 ր.) ծառայէր։ Նրանց մեր մէջ բերողը գործունէութեան փափագն է. ամօթ է մեզ համար նոյն իսկ նրանց վշտացնելը, իսկ նրանց մասին տարածուած լուրերը միմիայն զրպարտութիւններ են։ Ի՞նչ կասեն Կովկասի մեր եղբայրները, եթէ լսեն թէ ինչպէս ենք մենք վարվում ոչ միայն ուսուցիչների այլ և գրականութեան մէջ յայտնի անձի հետ. էլ ո՞ր ուսուցիչը այսուհետև ում կուզէ կոխել Թէհրան։

—

Դեկտ. 31-ին, անցեալ կաղանդի երեկոյեան, Հայկազեան ուսումնարանի ուսուցիչները կայացրին մի շքեղ երեկոյթ համերգներով և տօնածառով։ Թէ համերգները, թէ նուագածութիւններն և թէ տօնածառը շատ լաւ տպաւորութիւն թողին հասարակութեան վերայ։ Սրահը լիքն էր և որպէս լսում ենք, զուտ արդիւնքը եղել է 30 թումանից աւելի. տոմսակների գինը անխտիր 2 ղրան արժէր։

—

Նոյն ուսումնարանի ուսուցիչներից մէկը, սրանից մի շաբաթ առաջ հրաւիրեց Թէհրանի երիտասարդներին վերակազմելու համար թատերասիրաց խումբը և գործը յաջողուելու էր, եթէ մի ստորաքարշ մեքենայութիւն չը գար խանգարելու ամեն ինչ։ Թէհրանի հասարակութիւնը այս տարի ևս զուրկ կը մնայ ներկայացումներից և այդ՝ շնորհիւ իրենց մէջ բուն դրած այնպիսի արարածների, որոնք իրենք ընդունակ չեն գործելու, իսկ ուրիշի գործելուն էլ ընդիմանում են ստորերկրեայ միջոցների դիմելով։

—

Մեզ խնդրում են արձանագրել այն փաստը, որ եկեղեցին դարձրել են առևտրական հրապարակ։ Խաչը, ժամերգութեան միջոցին, ուղղակի աճուրդի էր դրուած ջրօրհնէքի օրը։—«Երեսուն թուման, ո՞վ աւելի» լսվում էր երեցփոխի ձայնը.—«Երեսուն երկու ինձ մօտ» գոչում էր մի հարուստ... Մէկն էլ խորհուրդ էր տալիս մի սեղան դնել ատեանում, մի մուրճ առնել ձեռքին ու այնտեղից գոչել. «մէկ, երկու... ո՞վ աւելի»...

—

Յունվար 13-ին, Դովլաթայ թաղում-, հայկական դպրոցի մէջ, կատարուեց Ուսումնասիրաց անունը, նաև անցեալ գործերն իր վերայ առնող ընկերութեան 25-ամեայ (?) յօբելեանը։ Երեք տարի չկայ որ այդ մարդիկ ընկերութիւն են կազմել՝ կազմալուծուած Ուսումն. ընկերութեան անունը իրենց վերայ առնելով և ահա համարելով թէ անցեալի գործերն էլ իրենց է վերաբերում, տօնում են իրանց գործունէութեան քսանհինգամեակը։ Զէ՞ նմանում սա այն ադաւին, որ սիրամարգի փետուրներով է զարդարվում։ Հանդէսի ժամանակ, երբ երաժշտասիրաց խումբը բաւական ականջ հարստահարեց դժոխային երաժշտութեամբ, հաշիւ կարդացուեց թէ 25 տարում հաշիւ կարդացողները որպիսի մեծ գործեր են կատարել։ Բոլորը լռութեամբ մեկնեցին հանդէսի սրահից և միանգամ էլ ապացուցեցին, որ ոչխարների չը պէտք է մեղադրել։

—

Լսում ենք որ շուտով Թէհրանում կը սկսի հրատարակուիլ «Աստղ Արևելեան» անունով մի ամսագիր. թէ ո՞րի խմբագրութեամբ—յայտնի չէ. ասում են որ ամսագիրը զուտ գիտական բովանդակութիւն է ունենալու։

—

Մայրաքաղաքումս այս օրերս սպասվում է Ռուսաց արտաքոյ կարգի դեսպանութեան։ Նորա ընդունելութեան համար, Բէհարիստանի պալատում մեծամեծ պատրաստութիւններ են տեսնվում։

—

Հաստատ աղբիւրներից լսում ենք, որ Բաֆֆի ընկերութիւնը չորս մեծ ընդհանուր ժողով է ունեցել և երկար վիճաբանութիւններից յետոյ, մեծամասնութեան ձայնով բարեհաճել է վճռել... «Շաւիղ» չըստանալ այլ ևս։

—

Դավրէժից մեզ գրում են։ Հաւաստի աղբիւրից մեզ տեղեկացնում են, որ Սալմաստի Հաֆթուան գիւղի տիրացու վարժապետներից մէկը թագցնում է ընթերցողներից գիւղի գրադարան—ընթերցարանի «Շաւիղի» համարները։ Ողորմելի մարդիկ, եթէ կարող էք, հերքեցէք թերթի ասածները, մենք պատրաստ ենք գաղափարական մարտ մղելու և մղումենք արդէն ձեզ տգրուկներիդ դէմ, իսկ եթէ ոչ, այդպիսի միջոցների դիմելով, դուք միայն հաստատում էք որ մեր ասածները ճիշտ են։

—

Նոյն տեղից մեզ յայտնում են, որ մի խումբ երիտասարդներ մտադիր են մի թերթ հրատարակել։

—

«Մշակ» լրագրի մէջ կարդում ենք հետևեալը։ «Էջմիածնից մեզ գրում են։ Ամերիկայի հայերի նախկին հովիւ Յովսէփ Վ. Սարաճեանը ուղարկուեց Սալմաստ, իբրև առաջնորդական փոխանորդ. իսկ նորընծայ Խաչիկ աբեղայ Դադեան ուղարկուել է Մաքու՝ Թադէոս Առաքելի (Դերիկ) վանքի կողոպտումի գործը քննելու համար»։ Այդ երկու վարդապետների ունեցած պաշտօնների մասին մեզ մեր թղթակիցը բոլորովին այլ կերպ է գրել. (№ 50-ի Ներքին լուրեր). ո՞րն է ստոյգը։

—

Դավրէժից մեր թերթին գրել ուզողներին յայտնում ենք, որ այդ քաղաքում մենք գործակալ չ՚ունինք. ուստի գրուիլ ցանկացողները թող ուղղակի դիմեն մեզ—խմբագրութեան՝ ուղարկելով կամ նամակադրոշմներ կամ թղթադրամ (բանկ-նոտ)։

—

Մեզ խնդրում են հրաւէր կարդալ, հասարակութեան հաշիւ տալու համար, հետևեալ անձերին։

1) Դարվազա Ղազվինի հայոց եկեղեցւոյ երեցփոխանին։

2) Վանաքի եկեղեցւոյ քահանային և երեցփոխին՝ իրենց եկեղեցւոյ հաշիւը, որ մնացել է առանց տալու 18 տարուց ի վեր.

3) Դարվազա Ղազվինի Ընթերցասիրաց ընկերութեան գրադարանի գանձապետին։

—

Թէհրանի Հայկ. դպրոցի այն հոգաբարձութիւնը, որ ընտրել էր Այվատեան վարդապետի առաջնորդութեամբ և որը իբր թէ պիտի Ազգ. հոգաբարձութիւն կոչուելով, միացում գոյացնէր երկու միմիանց վնասող դպրոցների մէջ, յունվարի 5-ին տուաց իր հրաժարականը։ Բանից դուրս է գալիս որ այդ հոգաբարձութեան ատենապետը, Այվատեանի ստիպմամբ, ընդունել էր այդ պաշտօնը ոչ թէ գործելու համար, այլ «լոկ անուամբ» ատենապետ լինելու (ինքը ատենապետն է խոստովանուել այդ՝ մի նամակով)։ Եւ իսկապէս իր գործունէութեան ամբողջ ընթացքում, նոր հոգաբարձութիւնը շատ կիսակատուր ժողովներից յետոյ, չը կարողանալով ուսուցիչների ռոճիկները վճարել, թողեց իր պաշտօնը, որ «լոկ անուամբ» էր միայն կատարում։ Մի բան միայն զարմանալի է, այդ այն է, որ պ. Ատենապետը չը գիտէ այն տարրական օրէնքը, որ պարտաւոր էր ընդհ. ժողով գումարել և այնտեղ միայն տալ իր հրաժարականը։ Հայկ. դպրոցը այժմ մնացել է անխնամ, միթէ պիտի փակուի։

—

Լսում ենք որ առաջնորդական փոխանորդը— Սահակ քահանան, հեռագրել է Սպահան—առաջնորդին, յայտնել է Հայկ. դպրոցի վիճակը և հրաման խնդրել հոգաբարձութեան նոր ընտրութեան։ Առաջնորդը պատասխանել է որ իրեն տեղեկացնեն նամակով որ իմանայ թէ ինչու են հրաժարուել։ Զարմանալի է թէ ինչու սրբազանը չի ուզում տեղեկանալ իր կողքին նստած Այվատեան վարդապետից, որ նոր հոգաբարձութիւնը երկու պայման ունէր. 1) լինել հոգաբարձու, մինչև յունվար 1-ը և 2) լինել «լոկ անուամբ» հոգաբարձու, ինչպէս որ շեշտել է հոգաբարձութեան ատենապետը, իւր, դէպի ուսուցիչները ուղղած նամակի մէջ։ Խնդիրը շատ պարզ է։ Հոգաբարձութիւնը կարծում էր թէ ինքը անունով հոգաբարձու է և դրա համար էլ անշարժ և անհոգ նստեց, բայց երբ ուսուցիչները իրենց ռոճիկը ուզեցին և յայտնեցին որ մտադիր չեն օդով կերակրուել, հոգաբարձուները տեսան որ գործել է պէտք.... և հրաժարուեցին։ Այսքանը առ այժմ պարզել հարկաւոր էր. մենք առիթ կ՚ունենանք վերադառնալ այդ հարցին մի առանձին յօդուածով։

—

«Շաւիղի» ներկայ տարուայ համարներից նուիրել են զանազան հիմնարկութիւնների հետևեալ անձինք։

1) Թէհրանից Մանաս Յովսեփեանը Վանաք գիւղի դպրոցին։

2) Սպահանից, Օրիորդ Բալասան Ներսեսեանը, Սպահանի Ս. Կատարինէ օր. դպրոցին։

3) Սարկաւարգուհի կոյս Թագուհի Խաչիկեան, Նամակերտի նոր բացուած դպրոցին։

4) Առաքել Մարգարեան, Ռաշտի Հայոց գրադարանին։

5) Սալմաստից, Որդիք Բ. Երզումանեանք

Սարամերիկի ուսումնարանին։

6) Եղբարք Թումանեանցները, մի օրինակի նուէրը՝ թողած լինելով խմբագրութեան տրադրութեան, որոշեցինք ուղարկել Ժընէվի հայ ուսանողների գրադարանին։

7) Աստարաբատից, Եղբ. Ա. Փանեանց. վերին Ագուլիսի հայոց դպրոցին.

8) Եղբարք Ս. Երզումանեանք, թողած լինելով մի օրինակ նուէր խմբագրութեան տրամադրութեան տակ, յատկացնում ենք այդ՝ օրինակը Լէյպցիգի հայ ուսանողների գրադարանին։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

Երբ փոստը չէ գալիս, մարդ կարօտ է մնում լրագիրների, իսկ երբ ծայրը բացվում է, այնքան կուտակվում են նրանք միմիանց ետևից, որ մարդ ստիպվում է միմիայն հարևանցի ակնարկներով բաւականանալ։

Այդպէս էլ կը վարուենք այս անգամ թերթերի անցեալ տարուայ վերջին համարների հետ։

«Մշակ», «Նոր-Դար» կամ «Արձագանք», հաւասարապէս, նոյնատեսակ եռանդով արտատպում են, թարգմանում և իրանց էջերը լեցնում թիւրքահայերի կեանքի մասին հեռագիրներով և տեղեկութիւններով, որոնցից շատ շատերը վերին աստիճանի հետաքրքրութիւն ունին իւրաքանչիւր հայի համար։

Բայց ինչ որ հազիւ է պատահում Կովկասի հայ թերթերի համար, դա՝ այն միաձայն կարծիքն է, որ յայտնում են Կ. Պոլսի նոր ընտրուած հայոց պատրիարք Մատթէոս Իզմիրլեանի մասին։ «Ցարազն» ու «Մշակը» խորհուրդներ են տալիս նրան և յոյսեր են տածում. «Նոր-Դարը» և «Արձագանքը» ուրախութիւն են յայտնում այդ լաւ ընտրութեան համար։

Մեր կողմից, ճշմարիտ, մենք ձեռընպահ ենք մնում մի այնպիսի կրօնաւորի նկատմամբ, որի անցեալ գործունէութիւնից ոչինչ վատ կամ լաւ յայտնի չէ։ Ծանրակշիռ գործերի ժամանակ է որ Իզմիրլեանին մի կարևոր պոստ է յանձնվում, ամենքի աչքը դիտում է նրան, այլ ևս անցել է ժամանակը երբ կարելի էր ասել «սպասենք, գուցէ լաւ կը լինի»։ ոչ, եթէ Իզմիրլեանը լաւ պատրիարք է, նա հէնց առաջին օրը կարող է իր գոյնը ցոյց տալ։ Սպասելը, այժմ քան երբէք, մահացուցիչ է թէ իր և թէ այն ազգի համար, որին կոչուած է նա հովուելու։

Ինչ որ է. Կովկասի հայ թերթերը միաձայն եթէ չեն գովում այդ կրօնաւորին, չեն էլ պարսաւում. մինչև իսկ լաւ յոյսեր ունին նրա վերայ։

Աստուած տայ որ չը սխալուեն։

*** «Մշակի» մէջ ի հարկ է կան շատ հետաքրքիր լուրեր Կովկասի կեանքի վերաբերութեամբ, բայց գոնէ մեր աչքին աւելի խփեց այս անգամ «վրաց մտաւոր աշխարհից» (№ 144) յօդուածի վերջին կտորը։

Այդ կտորից երևում է, որ վրաց մամուլի մէջ ծագել է մի նոր բանակռիւ, որում, վրացի կանայք և տղամարդիկ միմիանց մեղադրում էին փոխադարձաբար՝ մայրենի լեզուն աղաւաղելու համար», բանակռիւը ծաւալ է ստանում և հանգում է կանանց հարցի (féminisme)։ Տղամարդիկ յարձակվում են կանանց վերայ, մեղադրում նրանց շռայլութեան, անհոգութեան և այլն մէջ, իսկ կանայք պաշտպանում են իրենց՝ հանճարեղ խօսքերով։

Ահա այդ պաշտպանողական ճառերից մի սքանչելին, որ կարող է մի սիրուն կոկլիկ ապտակ համարել խփած տղամարդու երեսին։

«Եւ միթէ դուք—գրում է մի կին—նայում էք կանանց վերայ այն աչքով թէ նրանք էլ կարող կը լինեն մի որ և է բանում ձեզ հաւասարել։ Տղամարդիկդ նայում էք կանանց վրա, ինչպէս երեխան իր տիկնիկի (խամաջուք) վերայ։ Նրա ոչ մի կարծիքը ձեզ համար դին չունի, քանի որ մի մեծ վիհ է ստեղծուել ձեր և կանանց միջում։ Եւ ձեզ, ի հարկէ, յայտնի է, որ եթէ ամբողջ քսան և չորս ժամ կանգնեն մի խելօք մարդու գլխին և կրկնեն թէ՝ «ցիմար ես»,—անկարելի է որ նրա վրայ ազդեցութիւն չը գործեն։ Եւ մեր գլխում, ձեր ջանքերով այնքան արմատացել է այդ կարծիքը, թէ ոչ մի բանում մենք—կանայքս չենք կարող ձեզ հասնել, որմինչև իսկ դժուարանում ենք ձայն հանել մի որ և է հասարակական գործում»...

Հիանալի տողեր, որոնք արտայայտում են կատարեալ ճշտութիւն։ Բայց եթէ վիրուհին այդպէս է գրում, պարսկահայ կինը արդեօք ինչեր պիտի գրի։ Խեղճ պարսկահայ կին, մարդիկ սկի գոյութիւնդ էլ չը գիտեն, փտիր կապերի մէջ, զուարճութեան առարկայ, ամուսնուդ գրասը եղիր և լալու իրաւունք անգամ մի ունենալ։

*** № 148-ով «Մշակը» վերջացնում է իր 1894-ի տարեշրջանը, յայտարարելով որ ոչ մի համար չի ուղարկելու այն պարոններին, որոնք սիրում են ապառիկ բաժանորդ գրուել։ «Պէտք է վերացնել այդ վատ սովորութիւնը» շեշտում է «Մշակի» առաջնորդողը։

Իրաւունք ունի. «Շաւիղն»էլ այս տարի վճռել է վերացնել այդ վատ սովորութիւնը, բայց շատ ենք վախենում որ այդ սովորութեան վերացումըիրան էլ չը վերացնի։ Հրատարակիչը՝ վճռել է վնասուել բայց ապառիկներ չ'ունենալ։ «Մշակի»համար ապառիկը էլի մի քիչ հասկանալի է, 10 բուբլի (մօտ $4^1/_2$ թ.) մի անգամով տալը մի քիչ դժուար է, բայց Շաւիղի բաժանորդագինը—չէ՞ որ միայն մի թուման է ($1^1/_2$ բուբլի պարսկաստանի համար)։

Բացի դրանից, «Մշակը» յայտնում է որ յունվարը դեռ չի եղել և ահա 100 տեղերից նուէրներ են խնդրում. իսկ նուէրներ տուող չը կայ։ «Շաւիղը» վճռել է նուէրներ տալ այն ժամանակ միայն, երբ մի հարուստ վճարի թերթի գինը. օրինակ հէնց այս համարով նա յայտնում է թէ քանի նուէրներ են տրվում այս—այն հաստատութիւնների։ Ուստի պարտք եմ համարում յայտնել Բալախանիի ինժիներներին, որ ի զուր տեղը նամակ չը գրեն՝ և ձրի նուէր չուզեն թերթը։

*** Չը գիտեմ մենք ենք օպտիմիստ եղել թէ Կովկասի բոլոր թերթերն են լաւացել։ Այ, օրինակ. «Նոր-Դարը» այս անգամ մի լաւ յօդուած է տպագրել իր № 215-ում «խօսք և գործ» վերնագրով, Ա. Ագայեան ստորագրութեամբ։ Լուրջ ենք ասում, «Նոր-Դարը» իր կեանքում այսպիսի լաւ յօդուածներ գուցէ սկի չէ տպել։

Բերեմ մի քանի կտորներ նրանից։

«Ի՞նչ հրապարակախօս է նա, որ իւր գրութեան իւրաքանչիւր տողում շեշտէ, թէ մարդ պիտի անկեղծ, շիտակ լինի իսկ ինքը հրապարակով կեղծում է մի հայրապետի առաջ, որին եպիսկոպոս ժամանակ մռայլ գոյներով էր նկարագրում և ամենածանր մեղադրանքներ նրա վերայ բարձում»....

Ականջներդ կանչի «Նոր-Դար» և «Արձագանք»... չէ՞ որ այդ կտորը ուղղակի հէնց ձեզ է ուղղված. դուք չէ՞ք որ կեղծում էք (այն էլ ստորաքարշութեամբ) մի հայրապետի առաջ որին դուք, նրա եպիսկոպոս ժամանակ, մռայլ գոյներով էիք նկարագրում և ամենածանր մեղադրանքների մէջ ամբաստանում...

*** Ես չէի սխալվում ասելով որ «Նոր-Դարը», ով գիտէ, ինչպէս է եղել, որ Ագայեանի յօդուածը տպագրել է, չեմ սխալուել, որովհետև մի քանի համար յետոյ «Ազատամտութիւնը Պարսկաստանում« վերնագրի տակ կարդում ենք էլի միջնադարեան գաղափարներ։ Պարզ երևում է որ Պարսկաստանից է ուղարկվել «Նոր-Դարին»այդ գլուխ գործոցը։

Յօդուածը բարկանում է թէ ինչ գործ ունի ազատամտութիւնը և ինչու է նա համարձակվում ներս մտնել Պարսկաստանումն էլ. թէ ինչու ծընէվում աւարտող համալսարանականները «միջազգային տիրացութիւն» («Նոր-Դարի» բառարանից հանած) են անում, այսինքն յանդգնում են ստրկական ոգու տէր չը լինել և քննադատական հայեացքով վերաբերուել դէպի հայոց կաթուղիկոսի գործերը։

Մի խօսքով, այդ ազգային տիրացուն մի հրաշալի լոգիկայով գտնում է, որ ոչ ոք իրաւունք չ'ունի զուտ ճշմարտութիւն և երկնառաք պատգամ չը համարել Էջմիածին նստող հայ կրօնապետի անօրինութիւնները, որքան որ նոքա վնասաբեր լինէին։

Շնորհաւորում ենք «Նոր-Դարին»՝ իւր այդքան անտիկա գաղափարների համար։

Վ. Փ.

(Կը շարունակուի)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Կ. Պոլսի հայոց պատրիարք է ընտրել Մատթէոս եպիսկոպոս Իզմիրլեանը։

—Աֆրիկայի Մատագասկար կղզում կռիւ է սկսել։ Ֆրանսացիք տիրել են մի ամրոցի։ Կռիւը շարունակվում է։

—Կ. Պոլսի «Հայրենիք» թերթը տաճկական «Իգտամ» թերթից իմանում է, որ Կայսերական մի հրամանի համաձայն, Երզնկայի Դ. զօրաբանակի մէջ Համիդիէ հեծելազօրքի հինգ նոր գունդ ևս աւելացուել են։

—Էջմիածնից հայոց Կաթուղիկոսը Թիֆլիզ է գնացել, ուր նա մտադիր է անցկացնել երկու շաբաթ։

Ըրտնատէր—Հրատարակիչ՝
ԱՆԴՐԷԱՍ ԲԷԿՆԱԶԱՐԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ով որ ուզում է ՊԱՐՍԿԱԿԱՆ ՀԻՆԳ կամ ՇՇՅՊ նամակագրոշմներ վաճառել, ուղղակի իւր ունեցածի ՆՄՈՅՇՆԵՐԻՑ ուղարկի և վերջնական ԱՐԺԷՔԸ յայտնի առ պ. Հրանդ Յ. Մարիմեանին, Դավրէժ, հետևեալ հասցէով։ Hrand O. Marimian, The Imperial Bank of Persia. Tauris.

Հաշիւ 1894 թիւ, դեկտ. 31-ի, յօգուտ Թէհրանի Հայկ. դպրոցի տուած երեկոյթի։

ՄՈՒՏՔ

180 հատ տոմսակ, հատը 2զրանով	360	զրան
10 ,, ,, ,, 1 ,,	10	,,
Զանազան նուէրներից	122	,,
Բիւֆետից եկամուտ	115	,,
Գումարն է	607	զրան

ԾԱԽՍ

Մանր ծախսերի	73	10
Բիւֆէտի և տօնածառի	142	07
Շրի տոմսեր տուած	8	
Տոմսերի տպագրութեան ծախս	20	—
Երկու թուման սև փողի տոկոս	1	4
Գումարն է	245	1

Ուլեմն զուտ արդիւնք մնում է 361 զ. 19 շ.

Այս գումարը տրուած է ուսուցիչների այսպէս.

պ. Միքայէլ Եղիազարեանցին	150	զրան
պ. Աւետիս Ապրեսեանցին	190	,,
Դպրոցի ծառային	20	,,
Գումարն է	360	,,

Որով ինձ մօտ մնում է միայն 1 զ. և 19 շ. Այս հաշիւի գոկումենտները գտնում են ինձ մօտ

Վ. Փափազեան

"ՄՇԱԿ"
ԳՐԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ԹԻՖԼԻԶՈՒՄ
Տարեկան՝ բաժանորդագինն է 10 ր. կէս տարուանը 6 ր.
Դուրս է գալիս շաբաթը 3 անգամ. հասցէ՝ Tiflis (Russie) Rédaction «MSCHAK».

"ՄՈՒՐՃ"
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
Հրատ. Թիֆլիզում
Տարեկան բաժանորդ. 10 ր.
Հասցէ՝ Rédaction «MOURTCH» Tiflis (Russie)
Ուսումնարանների և աշակերտների համար՝ 8 ր.